

Որդեակ իմ երթ, երթ անգանգաղ,
Գընա՛ զգետնել զփղղըշտացին,
Ա՛ռ պարսառիկ քո և զմախաղ,
Ե՛ս ուղղեցից զբազուկ քոյին։

Եւ վերացաւ Զուարթունն իբրև զամպ թեթև։
Երգ ի բերան անդէն հովիւք բազմաբիւր
Նոր արքային մընչեն մաղթանս սիրաթև։
Եւ գեղափթիթ մարգին ի յարկ ծաղկաստե
Լընուն ըզծոց նորա պըսակօք քաղցրաբոյր։
Ի մեկնեն անդ՝ ասեն՝ թէ կայր և հայեր

Ի սիրային վայրըս սըրտին,
Յանտառս՝ ուր ստէպ գիշերախառն հասանէր,
Ուր նըւագէր յաճախ ցըմուտս արեգին։
« Հատորք հոգւոյս, ասէր, հիւզ՝ ի՛մ ծնընդավայր
Ընկալարուք զմորմոք սըրտիս, զհուսկն ողջոյն։

Անդ ի գահոյս, աչք իմ տըժգոյն
Ո՛ր գիտէ զձեզ լացցեն յերկար »։

Թրգմ. Հ. Արսէն Ղազիկեան

Դիրքիոյ

ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ

Կարմրուկ. — Մեղուններն կը համբարեն
միշտ աւելի քան զպէս զբեղուն, որով կը
կերակրեն թրթուրները յունվարէ սիսեալ։
Բայց բեղնոյ այն մասը՝ որ դուռած է հե-
ռաւոր ընկնելուն մէջ, բացակայ բնակու-
թեան կեդրոնէն, թողուելով կը կարծրանայ,
կը տարբարաշխի, և թթուելով անյարմար
կ'ըլլայ անդեան, և յայնժամ փոխելով իր
անունը կոշի կարմրոսի, կարմիր պունդն
համար զոր կը ստանայ։

Եթէ բազմաթիւ է մեղուաց ընտանիքը,
շուտով կը մաքրեն կարմրուկը, կրծելով բը-
ջիջները որոց մէջ զիգուած է։ Բայց այս
աշխատութեան յայնժամ կը դիմեն, երբ ի-
րենց բնակութեան տեղը նեղ գայ թրթուր-
ները բազմացնելու համար։

Կրնամք դարնան սկիզբը դիւրաւ ճանչել
խորսխին այն մասը՝ որ կարմրուկով լցեալ է.
վասն զի սովորաբար թեթև մզլուութիւն մը
կը ծածկէ երեսը։ Լաւ է վերցնել այս գար-
շխի նիւթը, գործաւոր մեղուաց աշխատու-
թիւնը խնայելու համար։

Ականատիւ. — Ականամոմն է ռեանային
նիւթ մը, հոծ, կպչուն, որ կը կակղնայ տա-
քութեան ժամանակ, և կ'ըլլայ չոր ու բե-
կանուտ ցրտութեամբ. իր գոյնն է թխորակ
կամ կարմրորակ, զոր կը ժողվեն մեղուններն
աղէկ եղանակի մէջ, և մանաւանդ ամառան
վերջերք, ծառաց պտուկներէն և կեղեւէն, և
բեղնոյ պէս կծիկ ընելով կը բերեն ի փե-
թակ։ Առատ ախանամոմ տուող ծառերն՝
են կաղամախ, աւռի, հաւամրգի, կնձի,

կնձնի, և ուրիշ քանի մը ծառեր որոց տե-
րևներն տոկուն են :

Ի՞նչ բանի կը գործածուի ականամոմ. —
Յունական անունն փոթոթիս, որ կը նշա-
նակէ Նախաքաղաք, յայտնի կը ցուցանէ
թէ ի՞նչ բանի կը զործածեն մեղուներն զա-
կանամոմ. այս ինքն, ծեփելու իրենց փե-
թակին ներքին և արտաքին կողմը, և պա-
րըսպով իմն պատելու իրենց բնակարանը : Ա-
նով կը գոցեն իրենց հնացեալ փեթակին
ծակերը, ճեղքերը, կ'ամփոփեն մուտքը, կը
հաստատեն խորխոսները փեթակին կողերուն
վրայ, և ի վախճանի, կը պատեն անասնոց
զիսկը, յետ սպաննելոյ զնոսա իրենց խայ-
թոցով, որք մտեր են իրենց փեթակին մէջ,
և զորս չեն կարող հանել զուրս փեթակէն :

Եւ որովհետեւ այս նիւթը ժողվելու համար
շատ ժամանակ կ'անցնեն մեղուներն և շատ
զօռարութեամբ, լաւ է պործածել այնպիսի
փեթակներ՝ որոց ներքին կողերն ըլլան ըստ
կարի հարթ և հաւասար :

Հայկական անունն Ալկանամոմ կը նշա-
նակէ խնուշ, փակել գալանս կամ զծակս
փեթակին այդպիսի մոմով :

Համբարումն ականամոմոյ. — Մեղու-
ներն չեն համբարեր զականամոմ բոլորներուն
մէջ, ինչպէս կ'ընեն զմեղը և զբեղուն, այլ
իրենց բնակարանին յատակին և կողերուն
վրայ կը փակցնեն, ուսկից կ'առնուն և կ'աշ-
խատին երբ հարկաւոր ըլլայ : Կրնան նոյն
ականամոմը շատ անգամ գործածել. և այս
յայտնի կը տեսնուի երբ դնեմք հին զատարկ
փեթակ մը արևու մէջ, և իսկոյն կը վազեն
նորա մէջ, ժողվելու իրենց թափերուն տար-
ճարներով արևուն տաքութենէն կակղցած ա-
կանամոմը :

Ըսինք թէ մեղուներն զօռարաւ կը ժող-
վին զականամոմ և զօռարաւ կ'աշխատին, և
յաւելումք ևս ըսել՝ թէ զօռարաւ կը թօ-
թափեն իրենց վրայէն : Երբ բռնաւորեալ
ականամոմով կը դառնան ի փեթակ, կը
փակին փեթակին մէկ կողմին վրայ, և գան
ներքին աշխատաւորներն իրենց կզակներով
կտոր կտոր խելու անսոց վրայէն : Այս կը-
տորներն կազմեն կակուղ և կայուն թելեր,
որք են ըստ բաւականին թափանցիկ զուտով :

Ականամոմը հինաւրով կ'ըլլայ զիմահար և
թխագոյն :

Բաղկացումիւն ականամոմոյ. — Ակա-
նամոմը տաքնաւով խնկաւետ հոտ մը կ'ար-
ձակէ. թորելով կ'ելնէ անկէ անուշահոտ իս-
կական իւղ մը : Եթէ դնեմք կրակի վրայ,
կ'արձակէ հոտ նման հալուէի կամ բալասա-
նի : Տաքութեամբ կը կակղնայ, և կը փրթի
եթէ քաշեմք ի թել երկայն : Եւ լուծուի
աշակին, բեկնի իսկութեան և ալքոհի մէջ :
Լուծեալ՝ կրնամք անջընել կտաւէ, մէջի օ-
տար մարմիններէն բաժնելու համար, և յե-
տոյ դնելով ջրոյ մէջ և տաքցնելով, կը ժող-
վի ամանին յատակը, և այս վիճակիս մէջ
է փրկուն և կարմիր, կամ թափ և կիսա-
թափանց :

Մոմ. — Մոմն է ճարպ կամ պարար-
տութիւն մեղուաց, և է արդիւնք մարսողու-
թեան բուսական հիւթոց, որ շրջան առնելով
զործարանաց մէջ, զայ հաւաքի պորտին քը-
տակներուն մէջ, անկանոն հնգանկիւնի ձևով :
Նայա ճարպային կերպարանօք կազմակերպի
մոմը պորտին քտակներուն մէջ, և յետոյ
մանր թեփի կամ ասղան կերպարանօք կ'ելնէ
զուրս պորտոյ մանակներուն մէջէն : Մեղու-
ներն կ'առնուն զայն, և անով կը շինեն
իրենց բնակարանը : Այս թեփերն այնչափ
թեթիկ են որ հարիւրաւոր ի միասին հազիւ
կշեռն ցորենոյ հատի մը չափ :

Հին ժամանակ կը կարծէին թէ զխաւոր
տարր մոմոյ՝ է բեղուն, որով կը սնանին կ'ը-
սէին մեղուներն : Ել'ըսէին ևս, թէ այդ
բեղունը կազմակերպեալ ի ստամոքսի մե-
ղուաց, յետոյ իրենց բերնէն զուրս կ'ելնէ,
ճերմակ խիւսկ կերպարանօք :

Որպէս զի մեղուներն կարող ըլլան կազ-
մել զմոմ, պէտք է որ բեղնոյ հետ ուտեն
մեղր կամ զինչ և է շաքարային նիւթ,
մարսեն զայն և կազմակերպեն : Այս կազ-
մակերպութեան ժամանակ, հանգստեան և
շերմութեան պէտք ունին : Նոյնչափ մեղրով
աւելի մոմ կազմեն ամառան մէջ՝ երբ տա-
քութիւնը շատ է, քան թէ աշնան երբ
տաքութիւնը քիչ է :

Ոմանք կը համարին թէ 25 մասն մեղրէ՝
կազմի 1 մասն մոմ. ուրիշներն կ'ըսեն թէ

5, 10, 12 կամ 15 մասնէ 1 մասն մամ. և երբեմն ի հանգամանս ինչ 2 կամ 3 մասն մեղրէ 1 մասն մամ: Այսպէս փոփոխական է քանակն մոմոյ ըստ հանգամանաց և ժամանակի:

Բաղկացուածին մոմոյ. — Ըստ տարբարանից մոմն է իւր կամ հարպ բուսական ստատիկ թթուածնալ: Թորելով՝ տայ թթուութուն ճարպատրական, թանձր իւր մը, չրածին կազ, կազեղէն թթուութուն բնածխական և ածուխ: Ունի գունաւորիչ նիւթ մը՝ որ փոփոխական է ըստ տարբր յորով կազմի: Մոմը կը հալի 64° հարիւրամասն ջերմութեւ, և իր խտութիւնն է 0,966: Անլուծական է ջրոյ մէջ:

Շինուածք մեղուաց կամ խորիսխ մեղու. — Շինուածք մեղուաց կ'ըսուին այն մոմակերտ կազմածը զոր կը յորինեն գործաւոր մեղուք, ի բնակութիւն ձագուց և ի համբարել զպաշար:

Այս շինուածներն կ'ըսուին խորիսխ, Պան, Մաղ, Չեւ, որք են շարունակութիւն Բլլաց որք կ'ըսուին ևս Գոռք մեղուաց. Ձագարան այն բլլիչներն որք են ի բնակութիւն ձագուց, շինուած են խոր կանոնաւոր ձևով, վեցանկանի հատուածակողմն: Եւ այս բլլիչներուն առկ ուրիշ կարգ մը բլլիչներ կը շինեն, որով խորիսխը կ'ըլլայ երկկարգ բլլիչներէ կազմեալ: Ուրիշ տեղ պիտի խօսիմք, թէ կան երեք տեսակ բլլիչներ, երկուքը կանոնաւոր ձևով և մին անկանոն: Սովորաբար խորիսխ կ'ըսուի մեղրով լեցունը, Պան, Մաղ, Չեւ, Գոռք, մոմակերտ կազմածը:

Յօրինումն խորիսխ կամ Պանի. — Մեղուներն կը սկսին կազմել իրենց պանը փեթակին բարձրագոյն մասէն. և եթէ գտնեն հոն հնազոյն պանի փափուկ մը, կը շարունակեն զայն: Եւ ասկէ յայտնի կը տեսնուի, թէ կրնամք տալ իրենց աշխատութեանց ինչ ուղղութիւն որ ուզեմք. գնելով իրենց բնականութեան վերին կողմը մասն մի դատարկ խորիսխ:

Երբ ուզէ մեղուն շինել իր բնականը, կը հանէ իր վերին ոտքերով կամ թաթեւով փորին հատուածներուն մէջէն մոմոյ թեւ:

փերը, և կը սանի իր կզակներուն, կը շագուէ և կազմէ տեսակ մը զանգուած, և կը փակցնէ այն տեղը ուսկից կ'ուզէ սկսիլ իր շինուածը: Ուրիշ մեղուներն ալ նոյն աշխատութիւնը կ'ընեն մինչև որ լմննայ մի բլիչ:

Մեղուներն շատ անգամ կը սկսին շինել այլևայլ պաներ միանգամայն, և իւրաքանչիւր պանին վրայ այլևայլ բլիչներ, բայց այս առաջին շինուածը կը համարուի իբրև նախագիծ. պատճառաւ, որ մեղուներն չեն կրնար ամէնքը միանգամայն նոյն պանին վրայ աշխատել. և թէ նախագիծալ աշխատութիւնը ժամանակի կարօտ է որ հաստատութիւն առնու. և թէ բլիչները իրարու կցելու համար պէտք է խմբովին միանան մեղուներն, և կեդրոնացնեն իրենց տարութիւնը հոն ուր պէտք է:

Մինչդեռ այս ինչ թուով գործաւորներ կ'աշխատին շինել առաջին բլիչները, և կազմել անոնց յատակին նախադիւր, ուրիշներն առ ի կախ իրենց ոտքերով թուին կերպարանափոխել ի մոմ գմեղը՝ զոր ունին իրենց ստամոքսին մէջ, և քիչ ժամանակէն կը փախանակեն առաջիններուն տեղ և առաջ կը տանին նախագիծալ աշխատութիւնը: Պանը զորք մեղուներն կ'ըսուին Սոստակայ:

Չեւ եւ դիրք պաներու. — Պաներն սկըսելով մեղուաբնոյն վերին կողմէն՝ ուղիղ կ'իջնեն վար: Պաներն գրեթէ միշտ կ'ըլլան իրարու զուգահեռական:

Թէպէտ և մեղուներն սովորական օրինոց կազմեն իրենց պաներն վերէն դէպ ի վար, բայց երբեմն կը տեսնուի ևս ըստ դիպաց վարէն դէպ ի վեր. և այս կը պատահի երբ փեթակին վերին կողմը կը դատարկի. այս կտորը կարկատելու համար հարկ կ'ըլլայ աշխատել վարէն դէպ ի վեր, բայց աւելի աշխատութեամբ:

Ուղղութիւն պաներուն. — Մեղուներն եթէ դիտէին առողջապահութիւնը, պէտք էին իրենց մաղերը կազմել այս քան այն ուղղութեամբ, և ոչ երբեք զբառն առչէ: Բայց ամենեւին չեն դիտեր, և կ'ուզեն իրենց մաղերը ըստ դիպաց:

Սովորաբար իրենց մաղերը կազմեն ըստ լայնութեան և բարձրութեան փեթակին, և

իրարմէ այնչափ հեռի, որ կարող ըլլան երկու մեղուներ զիրաւ անցնիլ մէջ տեղէն առանց նեղուելու :

Հաստութիւն եւ Ծամրութիւն մաղերու . — Այն մաղերն որոց բլիջներն շինուած են գործաւոր մեղուաց թրթուրներու համար, և երկու կողմէն ծածկած, ունին 24 հազարորդամետր հաստութիւն. իսկ անոնք որ են արու մեղուաց թրթուրներուն համար, ունին 34 հազարորդամետր հաստութիւն. մեղրով լեցուններն կ'ունենան երբեմն կրկնապատիկ հաստութիւն : Սյուրբարար փեթակին վերին կողմ և կողերուն մօտ եղած պաներն կ'ըլլան աւելի հաստ, այնպէս որ ասոնց մէջէն չեն կրնար երկու մեղու քովքով անցնիլ :

Երբ մաղերուն մէջ չըլլայ ոչ մեղր, ոչ բեղուն և ոչ թրթուր, յայնժամ ամենաթեթեւ են. բայց երբ մեղրով լեցուն ըլլան այնչափ ծանր կը կշռեն, որ դժուարաւ գորս կրնամք հանել առանց խորտակելու :

Գոյն եւ ամրութիւն պաներու . — Պաներն նոր շինուած ժամանակ ճերմակ են, կակուղ և զիւրաքեկ. բայց քիչ ժամանակէ ետքը կ'ըլլան դեղին ձորմբագոյն, ապա դեղին մթնագոյն, և յետոյ թխագոյն : Պաներուն վարի կողմերը որ կը մնան չորս հինգ տարի փեթակին մէջ, կ'ըլլան գորշ աղտեղի կամ սևագոյն : Հիննալով կ'ամրանան և հաստատութիւն կ'առնուն, այնպէս որ սաստիկ բախումն պէտք է գիրենք խորտակելու համար կամ արևու տաքութիւն :

Բիցիք գործաւոր մեղուաց . — Այն բլիջներն որ սահմանեալ են գործասէր մեղուաց թրթուրներուն համար են բազմաթիւք քան զայլս, և իբր եօթն ութերորդը բովանդակ բլիջներուն : Էան մաղեր որոց բլիջներն բովանդակ են գործաւորներու համար, և կան որ արուաց համար : Էան մաղեր որոց բլիջներուն մի մասը յայս ինչ կողմէն է գործաւորաց, միւս կողմ արուաց համար : Բայց միշտ կեցողութիւն մօտ եղած բլիջներն են գործաւորաց :

Գործաւորաց բլիջներն մանր են. ունին 12 հազարորդամետր խորութիւն և 5, 2 հազարորդամետր արամագիծ. կողերուն թանձրութիւնն հազիւ է քառորդ հազարորդամետրի, երբ մաղն ըլլայ նոր. բայց երբ բլիջ-

ներն այլևայլ անգամ ծառայեն նորանոր ձագերու, հետզհետէ կը թանձրանան իրենց գոյներն անզգալի կերպով, թրթուրներուն թաղած մետաքսեղէն ամենաուրախ խորիւրդ . բայց անով բլիջներուն ընդունակութիւնը յափսիս :

Բլիջ արուաց . — Արուներուն բլիջներն սակաւաթիւք են և քիչ մը աւելի խոր քան զգործաւորաց, և են 15 հազարորդամետր, նոյնպէս և արամագիծն աւելի մեծ է, և է 6, 6 հազարորդամետր : Այս բլիջներն կը բովանդակեն երբեմն ամբողջ մաղ մը, յաշակողմ կամ ի ձախակողմ փեթակին, և երբեմն քովքնափ մաղին տակի մասը և փեթակին ետևի կողմ : Գէշ նշան է եթէ գրանուին կեցողական մաղերուն մէջ :

Մեղուներն պիտեն կցել իրարու հետ արուաց և գործաւորաց բլիջներն, առանց այլապէս իրենց շինուածոյն չափակցութիւնը :

Դիտողութիւնը արու եւ գործասէր մեղուաց բլիջներուն վրայ . — Մեղուներն բլիջներուն հաստատութեան համար կը չըլլապատեն անոնց բերանին եզերքը բարակ ականամոմով, նոյնպէս և բլիջներուն ներքին ականիւնները : Բլիջներն են կանոնաւոր վեցականիւնի, բայց անոնցմէ որ մաղին ծայրերը կ'իյնան, և անոնք որ են ի հաստատութիւն, զորս ականամոմով կը հաստատեն փեթակին կողերուն վրայ, և այդ բլիջներն կ'ըլլան հնգանիւնի :

Բլիջներն քիչ մը հակեալ են վերէն ի վար, արտաքուստ ի ներքս, իբր 4 կամ 5 աստիճան անկեամբ. և այս հակման պատճառն է որպէս զի մեղրը վար յիմափի : Բլիջներուն բերանին եզերքը քիչ մը թանձր ըլլալով, այն ալ կ'արգելու մեղրին հոռումը՝ որչափ ալ հեղուկ ըլլայ :

Փեթակ մը որ լցեալ ըլլայ պաներով, առանց բլիջներուն թիւը անթիւ և անհամար է : Փեթակ մը որ 27 լիտր ընդունակութիւն ունենայ, իր բլիջներուն թիւը կ'անցնի յիսուն հազար : Այս անհուն բլիջներն կրնան շինուիլ չորս կամ հինգ օրուան մէջ. այսչափ մեծ է մեղուաց գործունէութիւնը : Բայց այսպիսի երազութիւն յայնժամ ի գործ կը գնեն, երբ ընտանիքը բազմաթիւ ըլլայ, փեթակը մեծ, և եղանակը մեղրաբեր :


Բջիջը մայր մեղուաց կամ պարս տալու, եւ բջիջը արուեստական կամ փրկութեանս. — Մայր մեղուաց բլիջներն անման են բոլորովին արու և գործասէր մեղուաց բլիջներէն, և ոչ նոյն կարգով և ուղղութեամբ գրուած, այլ զատուած անոնցմէ և բաժակաձև իմն։ Մեղուներն աւելի մոմ կը գործածեն՝ խառնեալ քիչ մը ականամոմով՝ այս բլիջներուն շինութեան, որոց խորութիւնը քիչ է, իբր 5 կամ 6 հազարորդամետր, և տրամագիծը 8, 5 հազարորդամետր. բայց քիչ ժամանակէն կ'երկնայ, և վրան կը գոցուի։

Մայր մեղուաց բլիջներն՝ սր կրնան ըլ-

լալ փեթակի մը մէջ թուով հինգ կամ վեց, և երբեմն տասն կամ երկուսասան, և մինչև քսան և քսանհինգ, կը շինուին սովորաբար մաղին եզերքին մօտ երրորդ մասին վրայ, և իբր փեթակին կեդրոնը։

Երբեմն մեղուներն կազմեն մայրական բլիջներ խորխններուն մէջ տեղ։ Այս կը պատահի երբ մայրերնին մեռած ըլլայ և ուզեն ուրիշ մայր մը ունենալ գործաւորի մը թրթուրէն, ինչպէս պիտի անոնենք։ Այս բլիջներն կոչին Արունասական կամ փրկութեան բլիջներ։

Շարայաբելի




ՎԵՍՏԵԱՆ ԿՈՅՍ

ՊԱՏԾԱԿԱՆ ՎԷՊ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՋԻՆ ԴԱՐՈՒ

(Տես յ'էջ 376)



ԳԼՈՒԽ Է

ՎԻՐԱՒՈՐԵԱԼՆ



Մինչդեռ Եդուներէի տաճարէն կը հեռանար, Սեքստոս Սարգիստո Անիկետոսի ննջարանին մէջ ջղային թրմբուրով թեամբ բռնուած, չէր կարող միտքը ամփոփել՝ իր գանուած տեղն իմանալու համար, իւր մինչդեռ երկար ժամանակ խորհել կը ջանար, յանկարծ ննջարանին դռներն բացուեցան, և երեցաւ տոգոյն դիմօք օրիորդ մի՝ զոր առաջին անգամ տեսած էր ամփոթատրոնին մէջ։ Նա ոտից ծայրի վրայ քայլելով՝ մօտեցաւ հիւանդին անկողնոյն, և ժպտեցաւ. բայց վախելով թէ մի՞ գուցէ դարձեալ զառանցանաց մէջ ընկնի, կազդուրիչ պնդ մը մօտեցուց անոր շրթանց։ Վիրաւորն

գործխաբար կուլ տուաւ զայն, յետոյ ուզեց քանի մի խօսք բռնել, բայց փրորոնիա թոյլ չտուաւ՝ բռնելով։

— Մի՛ խօսիր, և ջանա՛ լաւ քնանալ, ես քեզ համար աղօթելու պիտի երթամ։

Էս յամրաքայլ դուրս ելաւ, թողլով ըզ-Սեքստոս, որ ինքն գինքը երազի մի խաղալիկ կը կարծէր, և կը ջանար անցեալը յիշել։ անօգուտ ջանք, որովհետեւ այն աստիճան գինով էր Դամեոփանոսի հանդիպած պահուն, որ ոչ ընդունած հարուածը միտքն էր, և ոչ գինքն օտար տան մէջ փոխադրողը։

Մտածելէ խոնջ, խողիւալ քուն մ'ունեցաւ՝ որ երկար չտեւեց, և որուն յաջորդեց